



Project funded by
EUROPEAN UNION



Մամլո հաղորդագրություն

28.11.2022

Բուլղարիայի Դոբրիչ քաղաքում AGREEN նախագծի շրջանակում տեղի է ունեցել «Ձեռներեցությունը հանուն Սևծովյան ավազանում կլիմային ուղղված խելացի գյուղատնտեսության» միջազգային դասընթացը

22-25.11.2022 շաբաթվա ընթացքում Դոբրուլոջայի ագրարային և բիզնես դպրոցը (DABS) հաճույքով հյուրընկալել է «Անդրսահմանային դաշինք հանուն Սևծովյան ավազանում կլիմային ուղղված խելացի և կանաչ գյուղատնտեսության» /AGREEN/ նախագծի շրջանակում միջազգային կարևորագույն միջոցառումներից մեկը: 6 երկրների մասնակիցները մասնակցել են Դոբրուլոջայի Դոբրիչ քաղաքում անցկացված միջազգային դասընթացին, որը նվիրված էր Սևծովյան ավազանում (ՍԱ) կլիմային ուղղված խելացի գյուղատնտեսության ձեռներեցությանը: Միջոցառմանը մասնակցել է յուրաքանչյուր երկրից (Բուլղարիա, Ռումինիա, Թուրքիա, Վրաստան և Հունաստան) առնվազն 3 ներկայացուցիչ (երիտասարդ ֆերմերներ, գյուղատնտեսության ոլորտի մասնակիցներ և/կամ վերջին կուրսի ուսանողներ, ովքեր հետաքրքրված են գյուղատնտեսությամբ զբաղվելու, առաջադրված են տեղական շահակից խմբերից և/կամ գյուղատնտեսության ոլորտում գործունեություն ծավալող բիզնեսի և/կամ հովանավոր կազմակերպությունների կողմից), մինչդեռ հայկական մի քանի մասնակիցներ (բազմապատկիցներ) մասնակցել են առցանց տեսակոնֆերանսի միջոցով:

Միջոցառումը նպատակաուղղված էր ներկայացնելու և փորձարկելու «Ձեռներեցությունը հանուն Սևծովյան ավազանում կլիմային ուղղված խելացի գյուղատնտեսության» վերապատրաստման դասընթացը, ինչպես նաև երիտասարդ բազմապատկիչներին նախապատրաստել դասընթացն իրենց երկրներում կազմակերպելու և անցկացնելու համար: Այն համատեղ նախագծվել և մշակվել է նախագծի գործընկերների կողմից նշանակված փորձագետների կողմից, բաղկացած է 6 հիմնական վերապատրաստման մոդուլներից և հարմարեցված է խառը շարժունակության համար: Դասընթացը ուղղված է երիտասարդ ձեռներեցներին աջակցելու, հմտությունների բարձրացման և խթանելու համար վերապատրաստման անհրաժեշտությանը՝ ներգրավելու կայուն և օրգանական գյուղատնտեսության մեջ և բարելավելու աշխատանքի ընթացքում երիտասարդ ձեռներեցների և գյուղատնտեսների կարողությունները:

Բուլղարիայում տեղի ունեցած միջոցառման ընթացքում նախագծի գործընկերներից վերապատրաստման տարբեր մոդուլների մշակողները ներկայացրին դասընթացի բովանդակությունը և ընդգծեցին ուսուցման ամենաարդյունավետ մոտեցումները, որոնք պետք է կիրառել ըստ սովորողների առանձնահատկությունների և ընտրված դասընթացի մատուցման եղանակների: AGREEN-ի գործընկերները և Փորձառության համայնքի անդամներն աջակցել և համակարգել են դասընթացը որպես մենթորներ:

Բազմապատկիչների հիմնական խնդիրն էր սովորել, թե ինչպես մատուցել դասընթացը AGREEN հարթակի օգնությամբ և խթանել այլ շահագրգիռ կողմերին իրենց գտնվելու վայրում այս հիմքի վրա դասընթացներ կազմակերպելու համար: Հետևաբար Դոբրիչի միջոցառման օրակարգը կառուցված էր դասընթացի վերապատրաստման ուսումնական ծրագրի հիմնական թեմաների շուրջ, որոնք կենտրոնացած էին հետևյալի վրա. կլիմային ուղղված խելացի գյուղատնտեսության մոտեցումներ, կլիմակայուն ագրոպարենային արժեքային շղթաների ստեղծում և պահպանում; կայուն տնտեսությունների կառավարում; կլիմային ուղղված խելացի գյուղատնտեսության գործունեության ֆինանսավորման և կայուն գյուղատնտեսական արտադրանքի շուկայավարման հնարավոր աղբյուրներ; ինչպես նաև բազմապատկիչներին համալրել գիտելիքներով և գործիքներով՝ դասընթացը տարբեր ուսումնական միջավայրերում մատուցելու և, ընդհանուր առմամբ, իրենց տեղական համայնքներում կլիմային ուղղված խելացի գյուղատնտեսության հայեցակարգն ու սկզբունքները տարածելու համար:

Ավելին....

Common borders. Common solutions.





Project funded by EUROPEAN UNION



«Ձեռներեցությունը հանուն Սևծովյան ավազանում կլիմային ուղղված խելացի գյուղատնտեսության» վերապատրաստման դասընթացը հասանելի է բոլոր հետաքրքրված սովորողների համար որպես ձեռնարկ, որը հրապարակված է նախագծի կայքում, բայց նաև ներկայացված է բաց կրթական ռեսուրսների տեսքով ու ինտեգրված է AGREEN-ի ինտերնետային հարթակում: Փորձնական փուլից հետո դասընթացի բովանդակությունը կթարգմանվի գործընկերի ազգային լեզուներով՝ այդպիսով դասընթացը հասանելի դարձնելով հարթակի էլեկտրոնային ուսուցման մոդուլի շրջանակներում բուլղարերեն, ռումիներեն, թուրքերեն, վրացերեն, հայերեն և հունարեն լեզուներով:

Բացի այդ, մասնակիցները հնարավորություն ունեցան գործնականում փորձարկելու AGREEN ինտերնետային հարթակը՝ կայուն արտադրողների հետ կապ հաստատելու և Սևծովյան ավազանում կլիմային ուղղված խելացի գյուղատնտեսության խթանման համար և, մասնավորապես, ուսուցման հնարավորությունները, որոնք այն ապահովում է Սևծովյան ավազանում կայուն, կենսաբանական և օրգանական գյուղատնտեսական ապրանքներ արտադրողների համար:

Դասընթացը AGREEN-ի կոնսորցիումի ջանքերի մի մասն էր՝ կարողություններ զարգացնելու ցանցային և վերազգային գիտելիքների փոխանցման համար՝ կլիմային ուղղված խելացի գյուղատնտեսություն հիմնելու և տնտեսական ու սոցիալական իրականացման ավելի բարձր տեմպեր պահպանելու համար: Բազմապատկիչների յուրաքանչյուր թիմի համար հաջորդ քայլը կլինի իրենց երկրներում տեղական բազմապատկիչների միջոցառում կազմակերպելն ու դասընթացը և վերապատրաստման նյութերը տեղական շահագրգիռ կողմերին ներկայացնելը:



Common borders. Common solutions.



Project funded by
EUROPEAN UNION



Ավարտ

«Սևծովյան ավազան 2014-2020 թթ.» համատեղ գործառնական ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրամիության կողմից Եվրոպական հարևանության գործիքի միջոցով և մասնակից երկրների՝ Հայաստանի, Բուլղարիայի, Վրաստանի, Հունաստանի, Մոլդովայի Հանրապետության, Ռումինիայի, Թուրքիայի և Ուկրաինայի կողմից:

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ: Դրա բովանդակությունը բացառապես Դոբրուդժայի ագրարային և բիզնես դպրոցի պատասխանատվությունն է և անպայման չէ, որ արտացոլի Եվրոպական միության տեսակետները:

Common borders. Common solutions.